

որը թէև ուրիշներէ պատմուած է տարրեր ենթադրութիւններու համար: Ահա այս վէպը:

«Գահակ կամ Զօհակ թագաւորի ուսերին բուսած էին երկու օձ կամ վիշապ. Մոգերը իրեն խորհուրդ տուած էին որ զանոնք անվնաս դարձնելու համար՝ պէտք էր սնուցանել մարդկային ուղեղով: Ահա պատճառը, որ ամէն օր կ'սպաննէին հուժկու ու գեղեցիկ երիտասարդները, անոնց ուղեղներէն օգտուելու համար:

Այս մատակարարութեան յատկացուած պաշտօնականները խղճահարուելով երիտասարդութեան սյս վիճակէն, խորհուրդ յղացան մարդկային ուղեղին խառնել ոչխարի ուղեղ, և որոշ չափով՝ երիտասարդներ ազատել մահէ: Եւ այսպէս շարունակ կարար զոհուելէ ազատած երիտասարդները կը փախցնէին լիւր, որպէս զի գաղտնիքը չպարզուի: Ժամանակների ընթացքին, այս փախտականներէն առաջ եկաւ «Քիւրդ» ցեղը:

Այս վէպին մէջ կը տեսնենք Քիւրդերու Ֆիլիքական յատկանիշեր՝ որ են լիւնական, փախտական, հուժկու, գեղեցիկ, վայրենի, հետեւաբար և ըմբոստ:

Ըստ ոմանց՝ Պարսիկները զանոնք Գայլ կ'անուանեն, որուն հասարակ ժողովուրդը կը հաւատայ, թէ Քիւրդերը առաջ եկած են գայլի սերունդէն: Կը հաւատան նոյնպէս թէ, Քիւրդ բառը կը գրեն ու կ'արտասանեն Գօուդ, որ կը նշանակէ ուժեղ, հզօր, և միևնոյն ժամանակ գայլ (*):

(*) Թիւրք զինուորական հին-ըէթիմեան պաշտօնէութեան մէջ կար մի Քիւրդ փաշա, որ կը կոչուէր Գուռդ Խամայիլ փաշա, այս պատուանունը աւանդաբար, գիտակցաբար կամ այդ անորոշ բնազգական զգացողութեամբ տրուած է իրեն՝ անոր համար որ, այս փաշան Քիւրդերը բարեկարգելու պաշտօնին զրկուած ժամանակ, նոր պատիժներ կը հնարէ անոնց համար. բազմաթիւ սրածայր եռանկիւնի բևեռներ շինել կու տայ և կը փռէ գետնի վրայ անպատրաստ հունձքի մը նման իբր կալաեղ, ու Քիւրդ աղաները եղան պէս իրար կապելով ոտաբոքելի քալել կու տայ բևեռներու վրայէն, ցորեն կալելու գործողութեան հետեղութեամբ. նոյնպէս կ'ըտուի թէ Տիւրքանակերտի մէջ Քիւրդ աղաները բանտարկած